



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են ոչ առևտրային կազմակերպությունների ԱԱՀ վճարող համարվելու դեպքերը և ժամկետները,

- 59-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերության համապատասխան՝ ոչ առևտրային կազմակերպությունները մինչև օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամը գերազանցելը օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքներ իրականացնելու դեպքում, այդ գործարքներից՝ օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում ԱԱՀ հաշվարկելու և պետական բյուջե վճարելու պարտավորություն չեն կրում,

- 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը, օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

- 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ:

Շահութահարկի առումով առանձնահատկություն սահմանված է օրենսգրքի 137-րդ հոդվածով, որը վերաբերում է անվճարունակ ճանաչման և (կամ) լուծարման գործընթացում գտնվող ռեզիդենտ շահութահարկ վճարողների կողմից շահութահարկի գումարների (այդ թվում՝ օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարների) վճարմանը: Այլ առանձնահատկություններ շահութահարկի գծով օրենսգրքով նախատեսված չեն և գույքի վաճառքից եկամուտները և ծախսերը, այդ թվում՝ շահութահարկի գծով առաջացող պարտավորությունը հաշվարկվում է օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգավորումներին համապատասխան:

Միաժամանակ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պարտապանի գործունեության կասեցման պահից վերջինիս անունից կառավարիչը ներկայացնում է՝

ա) տեղեկատվություն հարկային և այլ պարտադիր վճարների գծով սնանկության վարույթի ընթացքում լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ.

բ) պարտապանի գործունեությունը վերսկսվելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ:


ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 8-րդ մասին համաձայն՝ որևէ տեղեկություն հիմք չի հանդիսանում հարկ վճարողի հարկային պարտավորության հաշվարկման և գանձման համար, քանի դեռ հարկ վճարողը դրան ծանոթանալու և համապատասխան բացատրություններ տալու հնարավորություն չի ունեցել, բացառությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքին համապատասխան պարտապանի գործունեության կասեցման պահից վերջինիս անունից կառավարչի կողմից հարկային մարմին ներկայացված՝ սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ հարկային մարմնի սահմանած ձևով տեղեկատվության, որի հիման վրա հաշվարկվում են պարտապանի հարկային պարտավորությունները: Միաժամանակ, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.07.2017թ. N220-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետին համապատասխան՝ ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 8-րդ մասին և «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 5-րդ մասի «ա» կետին համապատասխան՝ սնանկության վարույթի ընթացքում հարկերի և (կամ) վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը պարտապանի անունից հարկային մարմին է ներկայացվում սնանկության կառավարչի կողմից՝ յուրաքանչյուր հարկի և (կամ) վճարի համար սահմանված հարկային հաշվարկի ձևով:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ գրությամբ նշված դեպքում եթե ոչ առևտրային կազմակերպությունն օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան չի համարվում ԱԱՀ վճարող, ապա ոչ առևտրային կազմակերպության

կողմից գույքի օտարման գործարքի մասով ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն չի առաջանում: Միաժամանակ, տվյալ դեպքում պարտապանի՝ ԱԱՀ վճարող չհամարվող ոչ առևտրային կազմակերպության անունից սնանկությանը կառավարիչը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.07.2017թ. N220-Ն հրամանին համապատասխան ԱԱՀ-ի մասով՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ չի ներկայացնում, իսկ շահութահարկի մասով ներկայացնում է շահութահարկի հարկային հաշվարկ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

4/4/2023



ԱՐԹՈՒՂ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ ԿԱՐԿ հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության թիվ 1 բաժին, Աշոտ Միրումյան, հեռ.՝ 060-844-781